ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՆՕՐԻՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ
ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

2011թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԹՄՐԱՄՈԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՊՕՐԻՆԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՏԱՐՎՈՂ ՊԱՅՔԱՐԻ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

ԵՐԵՎԱՆ - 2012

Թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը խոր արմատներ է գցել և դարձել մեծ ու փոքր պետությունների գերխնդիրներից մեկը: Այն ազդում է ոչ միայն երկրների սոցիալ-տնտեսական կառուցվածքների վրա, այլև քաղաքական և միջազգային հարաբերությունների վրա: Այն դարձել է համընդհանուր խնդիր, որի դեմ պայքարելու համար անհրաժեշտ է երկրների իրավապահ մարմինների համակողմանի համագործակցությունը:

Համաշխարհային համագործակցության գնահատմամբ աշխարհի երկրների անվտանգության հիմնական սպառնալիքը մնում է միջազգային ահաբեկչությունը, որի ֆինանսավորման հիմնական աղբյուրն է /մարդկությանը վտանգող գործոններից մեկը/՝ միջազգային <<սև շուկաներում>> թմրամիջոցների իրացումից ստացվող գումարները:

Թմրամիջոցների ապօրինի շրջանառությամբ ձեռք բերված միջոցներով ստեղծվում են հանցավոր խմբեր, որոնք ազդում են երկրների ներքին ու արտաքին քաղաքականության վրա:

Չնայած համաշխարհային հանրության կողմից ձեռնարկվող միջոցառումներին թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ տարվող պայքարի արդյունավետությունը մինչ այսօր բարձր չէ:

Թմրամիջոցների ապօրինի շրջանառության հակազդումը՝ կապված տարբեր երկրների ակտիվ քաղաքական, տնտեսական, մշակութային ինտեգրացման հետ, մեկ երկրի, առավել ևս մեկ ծառայության շրջանակներում՝ հնարավոր չէ լուծել: Անհրաժեշտ է մշակել կանխարգելիչ համատեղ ծրագրեր՝ ուղղված թմրամիջոցների պահանջարկի նվազեցմանը, որը կբերի վերջինիս առաջարկի նվազեցմանը:

Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմինների կողմից 2011 թվականի ընթացքում թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության դեմ տարվող պայքարի ուղղությամբ ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում հայտնաբերվել է **1525** հանցագործությունների և **291** իրավախախտումների դեպքեր /2010 թվականին համապատասխանաբար՝ 1524 և 296/:



Գրաֆիկ 1 . Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության հետ կապված հայտնաբերված հանցագործությունների և իրավախախտումների քանակական պատկերը՝ 2010-2011թթ.համեմատությամբ

ՀՀ քր. օր-ի հոդվածներ		2010թ.	2011թ.		
266, 268		1518	1512		
Այդ թվում	266, 1-ին, 2-րդ մասեր	514	590		
	266, 3-րդ մաս	162	128		
	266, 4-րդ մաս	115	36		
	268	727	758		
267		0	0		
269		0	3		
270		0	0		
272		0	2		
273		5	8		
274		1	0		
Ընդամենը		1524	1525		

Աղյուսակ 1. Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության հետ կապված հայտնաբերված հանցագործություններն ըստ ՀՀ քր. օր-ի հոդվածների



Գրաֆիկ 2. Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի իրացման հետ կապված հայտնաբերված հանցագործությունները /ՀՀ քր. օր-ի 266 հոդված/



Գրաֆիկ 3. 1998–2011թթ. ընթացքում հայտնաբերված թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության հետ կապված հայտնաբերված հանցագործությունների գրաֆիկական պատկերը

Հաշվետու տարում հանրապետության իրավապահ մարմինների կողմից ձեռնարկված օպերատիվ-հետախուզական և քննչական միջոցառումների արդյունքում, ընդհանուր առմամբ, ապօրինի շրջանառությունից հայտնաբերվել և առգրավվել է 128 կգ 50 գր տարբեր տեսակի թմրամիջոց՝ 2010 թվականի 126 կգ 522 գր-ի դիմաց /համաձայն ՀՀ ոստիկանության ՓՔՎ, <<ՀՀ փորձագիտական կենտրոն>> և ՀՀ ԳԱԱ <<Փորձաքննությունների ազգային բյուրո>> պետական ոչ առևտրային կազմակերպության տվյալների/ :

Թմրամիջոցի տեսակը	2010թ. /գր/	2011թ. /գր/	
Մարիխուանա	59036	20027.9	
Հաշիշ	1041.6	11321.4	
Հաշիշի յուղ	0.715	73.41	
Կակաչի ծղոտ	12.86	-	
Կոկաին	-	2.209	
Ափիոն	8856.45	1163.2	
Ացետիլացված ափիոն	54.5	29.55	
Հերոին	6971.2	90136.6	
Բուպրենորֆին	9.38	32.2	
Մորֆին	1.27	0.008	
Մետադոն	45.1	1.43	
Կոդեին	24.81	19.65	
Օմնոպոն	0.02	0.26	
Ամֆետամին	21508.5	3999.9	
Մետամֆետամին	28959.4	1241.9	
Ընդամենը՝	126521.8	128049.7	

Աղյուսակ 2. Իրավապահ մարմինների կողմից հանրապետությունում ապօրինի շրջանառությունից հայտնաբերված և առգրավված թմրամիջոցների ցանկը

Բացի վերոհիշյալ նյութերից ապօրինի շրջանառությունից հայտնաբերվել և առգրավվել են նաև 72.55 գր հոգեմետ նյութ, 758.5 մլ պրեկուրսոր, /2010 թվականին՝ 76.4 գր հոգեմետ նյութ եւ 16 լիտր 715 մլ պրեկուրսոր/:

Ոստիկ. ՄՎ բաժին	Ընդամենը		Հանցագործ.		Իրավախախտ	
	2010	2011	2010	2011	2010	2011
Շենգավիթ	69	105	59	89	10	16
Էրեբունի	170	167	164	157	6	10
Կենտրոնական	295	250	292	243	3	7
Արաբկիր	76	170	58	155	18	15
Մալաթիա	92	138	74	131	18	7
Նոր Նորք	99	98	88	72	11	26
Մաշտոց	33	50	33	44	0	6
Քանաք-Զեյթուն	75	52	65	43	10	9
Մետրոպոլիտ.	7	6	7	6	0	0
ԵՐԵՎԱՆԻ ՈՎ	**916**	**1036**	**840**	**940**	**76**	**96**
Աշտարակ	53	17	39	17	14	0
Ապարան	7	3	3	2	4	1
Արագած	0	1	0	1	0	0
Թալին	5	4	2	3	3	1
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՈՎ	**65**	**25**	**44**	**23**	**21**	**2**
Արտաշատ	47	36	30	22	17	14
Արարատ	26	34	17	17	9	17
Մասիս	17	46	13	39	4	7
ԱՐԱՐԱՏԻ ՈՎ	**90**	**116**	**60**	**78**	**30**	**38**
Արմավիր	53	88	38	72	15	16
Բաղրամյան	5	6	4	5	1	1
Վաղարշապ.	39	41	29	26	10	15
Մեծամոր	78	10	75	8	3	2
ԱՐՄԱՎԻՐԻ ՈՎ	**175**	**145**	**146**	**111**	**29**	**34**
Գավառ	5	11	5	6	0	5
Ճամբարակ	1	1	1	1	0	0
Մարտունի	6	14	6	8	0	6
Սևան	11	6	7	4	4	2
Վարդենիս	4	5	4	5	0	0
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՈՎ	**27**	**37**	**23**	**24**	**4**	**13**
Վանաձոր	55	56	46	37	9	19
Գուգարք	9	6	6	3	3	3
Թումանյան	20	11	15	10	5	1
Սպիտակ	16	12	9	8	7	4

Ոստիկ. ՄՎ, բաժին	Ընդամենը		Հանցագործ.		Իրավախախտ	
	2010	2011	2010	2011	2010	2011
Ստեփանավան	8	6	8	5	0	1
Տաշիր	7	10	6	7	1	3
ԼՈՌԻ ՈՎ	**115**	**101**	**90**	**70**	**25**	**31**
Հրազդան	64	71	57	64	7	7
Կոտայք	29	23	12	18	17	5
Նաիրի	22	20	12	11	10	9
Չարենցավան	12	12	7	7	5	5
ԿՈՏԱՅՔԻ ՈՎ	**127**	**126**	**88**	**100**	**39**	**26**
Գյումրի	155	93	111	75	44	18
Ախուրյան	5	12	5	9	0	3
Ամասիա	2	2	2	2	0	0
Անի	2	4	2	1	0	3
Աշոցք	3	1	2	1	1	0
Արթիկ	10	9	10	9	0	0
ՇԻՐԱԿԻ ՈՎ	**177**	**121**	**132**	**97**	**45**	**24**
Կապան	20	17	11	9	9	8
Գորիս	19	32	16	27	3	5
Մեղրի	15	13	14	10	1	3
Սիսիան	8	8	8	6	0	2
ՍՅՈՒՆԻՔԻ ՈՎ	**62**	**70**	**49**	**52**	**13**	**18**
Եղեգնաձոր	5	5	4	3	1	2
Վայք	4	4	2	3	2	1
Ջերմուկ	1	2	1	1	0	1
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՈՎ	**10**	**11**	**7**	**7**	**3**	**4**
Իջևան	8	7	6	6	2	1
Նոյեմբերյան	5	4	8	4	0	0
Տավուշ	3	3	2	2	1	1
Դիլիջան	19	3	14	2	5	1
ՏԱՎՈՒՇԻ ՈՎ	**35**	**14**	**27**	14	**8**	0
Տրանսպ. ՈՎ	10	7	10	**4**	0	**3**
Զվարթնոց օ-կ	11	7	8	5	3	2
ԿՀԴՊ ԳՎ	453	563	453	563	0	
ԸՆԳ. ՀՀ-ում	**1820**	**1816**	**1524**	**1525**	**296**	291

Աղյուսակ 3. Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության հետ կապված հայտնաբերված հանցագործությունների և իրավախախտումների համեմատական պատկերը ըստ ոստիկանության տարածքային ստորաբաժանումների

2011 թվականի ընթացքում թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության ոլորտում հանցագործություններ կատարելու համար քրեական պատասխանատվության է ենթարկվել 711 անձ, իսկ 2010 թվականին՝ 854 անձ:

Նշված անձանցից 15-ը՝ կանայք են, 7-ը՝ անչափահաս, 24-ը՝ այլ երկրների քաղաքացիներ: 2010 թվականին այս տվյալները համապատասխանաբար կազմել են՝ 21, 2 և 58: ՀՀ քր. օր-ի 266 հոդվածի հատկանիշներով քրեական պատասխանատվության է ենթարկվել 223 անձ, 2010 թվականին՝ 354:

	2010?.		2011Ã.	
	³ ÝÓ	ï áÏ áëÁ	³ ÝÓ	ï áÏ áëÁ
ÀÝ¹ ³ Ù»ÝÁ	854	x	711	x
² ÛÙ Ãí áõÙÏ ÇÝ	21	2.4	15	2.1
² Ýã³ ÷ ³ Ñ³ ë	2	0.2	7	1
18-Çó 24 ï ³ ñ»Ï ³ Ý	59	6.9	59	8.3
25-Çó 29 ï ³ ñ»Ï ³ Ý	91	10.6	90	12.7
30-Çó 49 ï ³ ñ»Ï ³ Ý	575	67.3	425	59.7
50-Çó µ³ ñÓñ	127	14.8	130	18.3
ú ï ³ ñ»ñÏ ñ³ óÇ	58	6.8	24	3.4

Աղյուսակ 4. Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության համար քրեական պատասխանատվության ենթարկված անձանց տարիքային կազմը



Գրաֆիկ 4. Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության համար քրեական պատասխանատվության ենթարկված անձանց սոցիալական կազմը

Հանրապետությունում 2011 թվականի ընթացքում առանց բժշկի թույլտվության թմրամիջոցներ գործածելու համար /<<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> ՀՀ օր-ի 44.2 հոդված/ վարչական պատասխանատվության է ենթարկվել **283** անձ, իսկ 2010 թվականին՝ 295 անձ: <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> ՀՀ օր-ի 110 պրիմ 2 հոդվածի հատկանիշներով վարչական պատասխանատվության է ենթարկվել **8** անձ, իսկ 2010 թվականին՝ 1 անձ:

Հաշվետու տարում ՀՀ իրավապահ մարմինների կողմից ՀՀ առողջապահության նախարարության <<Հոգեբուժական բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի նարկոլոգիական կլինիկա և ՀՀ ԳԱԱ <<Փորձաքննությունների ազգային բյուրո>> պետական ոչ առեւտրային կազմակերպություն փորձաքննության ներկայացված 1631 անձանցից հաշվառման են վերցվել **1130**-ը /որից 18-ը՝ կանայք են, 27-ը՝ օտարերկրացի, որից 22-ը՝ Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի/: Դրանցից **697**-ի մոտ հայտնաբերվել է կանաբիսի /61.7 տոկոս/, **366**-ի մոտ՝ ափիոնի /32.4 տոկոս/ և **67**-ի մոտ՝ սինթետիկ /5.9 տոկոս/ խմբերին պատկանող թմրամիջոցի առկայություն /2010թ. համապատասխանաբար՝ 1631 անձանցից հաշվառման են վերցվել 1153-ը, որից 17-ը՝ կանայք եւ, 32-ը՝ ԻԻՀ եւ 1-ը՝ Իսպանիայի քաղաքացիներ/:

Հաշվետու ժամանակաշրջանը	օգտագործել են /անձ/	կանաբիսի խումբ	ափիատի խումբ	սինթետիկ խումբ
2010թ.	1153	577	488	88
2011թ.	1130	697	366	67

Աղյուսակ 5. Առանց բժշկի նշանակման և հաշվառման վերցված թմրամիջոցներ օգտագործած անձանց քանակական պատկերը՝ 2010-2011թթ.



Գրաֆիկ 5. Հաշվառման վերցված անձինք՝ ըստ օգտագործած թմրամիջոցների տեսակների



Գրաֆիկ 6. Առանց բժշկի նշանակման թմրամիջոցներ գործածած անձանց տարիքային կազմը

ՀՀ ոստիկանության ԻԿ տվյալների համաձայն <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> ՀՀ օր-ի 179 պրիմ հոդվածի հատկանիշներով վարչական պատասխանատվության է ենթարկվել **310** մարմնավաճառ, որոնց տարիքային կազմը հետեւյալն է՝ մինչեւ

18 տարեկան՝ 0, 18-ից 25 տարեկան՝ 73, 26-ից 35 տարեկան՝ 172 և 36-ից բարձր՝ 65 անձ /2010թ. վարչական պատասխանատվության է ենթարկվել 149 մարմնավաճառ/:



Գրաֆիկ 7. ՀՀ ոստիկանության ԻԿ տվյալների համաձայն վարչական պատասխանատվության և համապատասխան հաշվառման վերցված մարմնավաճառների տարիքային կազմը

Հաշվետու ժամանակաշրջանում հանրապետությունում իրավապահ մարմինների կողմից ՀՀ քր. օր-ի 261, 262 հոդվածների հատկանիշներով բացահայտվել է **45** հանցագործության դեպք /2010 թ.՝ 43/, ՀՀ քր. օր-ի 132, 132 պրիմ հոդվածների հատկանիշներով՝ **16** դեպք /2010թ.՝ 13 դեպք/: Նշված հանցագործությունների կատարման համար հետախուզման մեջ են գտնվում 31 անձ, դրանցից 25-ը՝ ՀՀ քր. օր-ի 132, 132 պրիմ և 6-ը՝ 261, 262 հոդվածների հատկանիշներով:

ՀՀ ոստիկանության 2011 թվականի հիմնական կազմակերպչական միջոցառումների պլանի և ՀՀ ոստիկանության պետի ցուցումի համաձայն 2011 թվականի օգոստոսի 15-ից մինչև սեպտեմբերի 10-ը ընկած ժամանակահատվածում հանրապետության տարածքում ՀՀ ոստիկանության կողմից կազմակերպվել եւ իրականացվել է <<**Կանեփ-կակաչ-2011**>> համալիր օպերատիվ-կանխարգելիչ միջոցառումը, որին մասնակցել են ոստիկանության, պաշտպանության նախարարության ստորաբաժանումների ծառայողները, տեղական ինքնակառավարման մարմինների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները: Հիշյալ միջոցառման նպատակն էր հայտնաբերել և ոչնչացնել վայրի աճած և ապօրինի մշակած ու աճեցված կանեփի և կակաչի կանաչ զանգվածներ:



Գրաֆիկ 8. Հանրապետությունում իրականացված <<Կանեփ-կակաչ>> համալիր կանխարգելիչ միջոցառումների արդյունքում հայտնաբերված և ոչնչացված կանեփի և կակաչի կանաչ զանգվածների քանակական պատկերը՝ վերջին տասներեք տարիներում /քանակը՝ կգ/

Ի կատարումն Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության անդամ պետությունների անվտանգության խորհրդի 2008թ. սեպտեմբերյան որոշման, ՀԱՊԿ անդամ պետությունների շրջանակներում ստեղծված թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի իրավասու մարմինների ղեկավարների համակարգող խորհրդի 2011թ. հիմնական միջոցառումների պլանի 3-րդ կետի և <<Կանալ-2011>> համալիր օպերատիվ-կանխարգելիչ միջոցառման անցկացման օրացուցային պլանի՝ 2011թ. դեկտեմբերի 6-ից ժամը 00-00-ից մինչև դեկտեմբերի 12-ը ժամը 14-00-ն անց է կացվել <<Կանալ-2011>> համալիր օպերատիվ-կանխարգելիչ միջոցառումը: Միջոցառման նպատակն էր կանխել մաքսանենգ ճանապարհով աֆղանական ափիոնի ներթափանցումը դեպի եվրասիական տարածաշրջանի պետություններ, այդ թվում՝ Կասպից եւ Սեւ ծովերի ջրային տարածքներով, պրեկուրսորների ապօրինի ներթափանցումը Աֆղանստան, սինթետիկ թմրամիջոցների ներթափանցումը՝ Եվրոպայից, ինչպես նաեւ՝ կանխել

թմրամիջոցների ապօրինի շրջանառությունից ստացված եկամուտների օրինականացումը, ապօրինի շրջանառությունից զենք, զինամթերք ու պայթուցիկ նյութերի հայտնաբերումը:

Միջոցառման արդյունքում հայտնաբերվել էր թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված **10** հանցագործության դեպք /քրեական պատասխանատվության է ենթարկվել 11 անձ/: Ապօրինի շրջանառությունից հայտնաբերվել և առգրավվել է ընդհանուր առմամբ 230.7 գր տարբեր տեսակի թմրամիջոց, որից ացետիլացված ափիոն՝ 206.2 գր,, մարիխուանա՝ 24.5 գր, 18 հատ հոգեմետ դեղահաբ: Բացի վերոհիշյալը՝ բացահայտվել է տարբեր տեսակի 54 հանցագործության դեպք, առգրավվել է 7 հատ հրազեն, 9 հատ որսորդական հրացան, 3 հատ ականանետ, 9 հատ ատրճանակ, 20193 հատ տարբեր տրամաչափի փամփուշտ, 37 հատ նռնակ, 1400 գր պայթուցիկ նյութ, 2 հատ սառը զենք, առգրավվել է 1269 ԱՄՆ դոլարին համարժեք փոխադրմանը արգելված նյութական իրեր:

Հայտնաբերվել է հետախուզման մեջ գտնվող 30 անձ:

2011թ. 12 ամիսների ընթացքում Հայաստանի Հանրապետություն է ներմուծվել

-մորֆին 1 % 1 մլ - 94000 հատ սրվակ

- մորֆին – 2500 հաբ

-օմնոպոն 2 % 1 մլ - 88000 հատ սրվակ

-պրոմեդոլ 2 % 1 մլ - 20000 հատ սրվակ

-ֆենտանիլ 0.005 % 1 մլ - 178000 հատ սրվակ

եւ բաշխվել թվով 105 հիվանդանոցների /Երեւան-42/ եւ Երեւան քաղաքի օնկոլոգիական հիվանդներին <<ԱՐՖԱՐՄԱՑԻԱ>> ՓԲԸ-ի դեղատան միջոցով:_Ներկայումս հաշվառման են գտնվում 180 օնկոլոգիական հիվանդ եւ 137 մեթադոնային բուժում ստացող թմրամոլ:

Հանրապետությունում 2009թ. իրականացվող մետադոնային ծրագրի շրջանակներում 2011թ. ներմուծվել է նաեւ մեթադոնի 5 մլգ N100 - /186 տուփ/, 10 մլգ N100 /709 տուփ/, 40 մլգ N100 /600 տուփ/: Ընդհանուր առմամբ 2304 շիշ:

Երեւանում գործում են 76 դեղատներ /65 ֆիրմաներ/, որոնք վաճառում են հոգեմետ դեղամիջոցներ, 21 ֆիրմա ներմուծում է հոգեմետ դեղամիջոցներ:

Այսպես, 2011թ. ընթացքում շուրջ 20 ընկերություն եւ անհատ ձեռնարկատերեր իրենց արտադրական կարիքների համար Հայաստանի Հանրապետություն են ներկրվել՝ 77700 կգ ացետոն /Կորեայից, Իրանից/, մեթիլէթիլկետոն 1815 կգ /Իրանից/, մեթանոլ 207 կգ /ԱՄՆ-ից/, էթիլային էֆիր 560 կգ /Հնդկաստանից/, տոլուոլ 12619 կգ /Իրանից, Անգլիայից/, ծծմբական թթու 3677310 կգ /Իրանից, Ֆրանսիայից, Անգլիայից/, աղաթթու 311050 կգ /Իրանից, Ֆրանսիայից, Վրաստանից, Ուկրաինայից, Անգլիայից, Գերմանիայից/, կալի պերմանգանատ 5054 կգ /Լեհաստանից, Ֆրանսիայից, Ուկրաինայից/, քլորոֆորմ 10 կգ /Ավստրիայից/, մեթիլային սպիրտ 730 կգ /Գերմանիայից, Անգլիայից, ԱՄԷ-ից/, Վրաստան է արտահանվել է 3608 կգ ացետոն:

Թմրամիջոցի տեսակը	Գինը
Կոկաին /1գր/	250-300 ԱՄՆ $
Ափիոն /1 գր/ մեծածախ /1գր/	50-80 ԱՄՆ $ 25-30 ԱՄՆ $
Կակաչի ծղոտ /1 գր/	80 ԱՄՆ ցենտ
Հոլանդական մարիխուանա /1 գր/ մեծածախ /1գր/	40-50 ԱՄՆ $ 30 ԱՄՆ $
Մարիխուանա /1գր/ մեծածախ /1գր/	20-25 ԱՄՆ $ 10-12 ԱՄՆ $
Հաշիշ /1 գր/	40-50 ԱՄՆ $
Մորֆի /1 %, 1 սրվակ/	15-20 ԱՄՆ $
Հերոին /1 գր/ մեծածախ /1գր/	100-110 ԱՄՆ $ 50-60 ԱՄՆ $

Սուբուտեքս / 1 հաբ/ մեծածախ /1գր/	100-110 ԱՄՆ $ 50-60 ԱՄՆ $
Տրամադոլ /10 հաբ/	13 ԱՄՆ $
Էքստազի /1 հաբ/ մեծածախ /1հաբ/	50 ԱՄՆ $ 20-25 ԱՄՆ $

Աղյուսակ 6. Թմրամիջոցների գները հանրապետության «սև» շուկայում

266	Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի եւ դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառությունն իրացնելու նպատակով կամ դրանց ապօրինի իրացնելը
267	Թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր, ինչպես նաեւ այդպիսիք պատրաստելու համար օգտագործվող եւ հատուկ հսկողության տակ գտնվող նյութեր, սարքավորումներ կամ գործիքներ արտադրելու, ձեռք բերելու, պահելու, հաշվառելու, բաց թողնելու, փոխադրելու կամ առաքելու կանոնները խախտելը
268	Թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառությունն առանց իրացնելու նպատակի
269	Թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր հափշտակելը կամ շորթելը
269.1	Թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր կամ դրանց պրեկուրսորներ ստանալու իրավունք տվող փաստաթղթեր ապօրինի պատրաստելը, օգտագործելը, կեղծելը կամ կեղծված փաստաթղթեր իրացնելը
270	Թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր ստանալու իրավունք տվող դեղատոմսեր կամ այլ փաստաթղթեր ապօրինի տալը
272	Թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի գործածմանը հակելը կամ ներգրավելը
273	Մշակումն արգելված թմրանյութեր, հոգեմետ, խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսեր ապօրինի ցանելը կամ աճեցնելը
274	Թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր գործածելու համար որջեր կազմակերպելը կամ պահելը
261	Շահադիտական նպատակով այլ անձի պոռնկությամբ զբաղվելուն ներգրավելը
262	Պոռնկությամբ զբաղվելուն նպաստելը
132	Շահագործման նպատակով մարդուն հավաքագրելը, փոխադրելը, հանձնելը, թաքցնելը կամ ստանալը
132 պրիմ	Մարդուն պոռնկության կամ սեռական շահագործման այլ ձեւերի մեջ, հարկադիր աշխատանքի կամ ծառայությունների ներգրավելը կամ ստրկության կամ ստրկությանը նմանվող վիճակի մեջ դնելը կամ պահելը
ՀՀ վարչ. օր-ի հոդվածներ	Վերնագիր
44.1	Մանր չափերով թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառությունն առանց իրացնելու նպատակի

44.2	Առանց բժշկի նշանակման թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր գործածելը
110 պրիմ 1	Թմրանյութեր պարունակող ցանքերի հսկողության ապահովման ուղղությամբ միջոցներ չձեռնակելը
110 պրիմ 2	Ապօրինաբար ձիթախաշխաշ կամ կանեփ ցանելը կամ աճեցնելը
179 պրիմ	Պոռնկությամբ զբաղվելը

Աղյուսակ 7. Քրեական և վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենսգրքերից քաղվածքներ